Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին նախագահության առաջին խորհրդական

Կենտրոնանալ նպատակակետի վրա

Վերջերս ես դիտում էի մի խումբ նետաձիգների: Դիտելու արդյունքում ինձ համար պարզ դարձավ, որ եթե իսկապես ցանկանում ես հմտորեն կիրառել աղեղն ու նետը, դա պահանջում է ժամանակ և փորձառություն:

Չեմ կարծում, որ կարող ես լավ նետաձիգի համբավ ձեռք բերել՝ դատարկ պատին նետեր արձակելուց և հետո նետերի շուրջ թիրախ նկարելուց հետո: Պետք է սովորես թիրախը գտնելու և նպատակակետին հարվածելու արհեստը:

Թիրախներ նկարելը

Նախ նետեր արձակելը և հետո թիրախ նկարելը կարող է մի փոքր չափազանց թվալ, սակայն երբեմն մենք ինքներս այդպես ենք վարվում կյանքի որոշակի պայմաններում:

Որպես Եկեղեցու անդամներ մենք հակված ենք լուրջ կարևորություն տալ ավետարանական այն ծրագրերին, հիմնախնդիրներին և նույնիսկ վարդապետություններին, որոնք հետաքրքիր, կարևոր կամ հաճելի են թվում մեզ: Մենք գայթակղվում և թիրախ ենք գծում դրանց շուրջ՝ փորձելով համոզել ինքներս մեզ, որ մենք կենտրոնացած ենք ավետարանի նպատակակետի վրա:

Սա հեշտ է անել:

Դարեր շարունակ մենք հրաշալի խորհուրդ և ոգեշնչում ենք ստացել Աստծո մարգարեների միջոցով: Մենք նաև առաջնորդություն և պարզաբանումներ ենք ստանում Եկեղեցու մի շարք ամսագրերի, գրքույկների և ձեռնարկների միջոցով: Մենք հեշտությամբ կարող ենք ընտրել ավետարանի մեր սիրած թեման, թիրախ նկարել դրա շուրջ և պնդել, որ մենք գտել ենք ավետարանի կենտրոնը:

Փրկիչը պարզաբանում է

Այս խնդիրը հատուկ չէ միայն մեր օրերի համար: Նախկինում հոգևոր ղեկավարները բավականին շատ ժամանակ էին վատնում՝ կազմելով ամենակարևոր պատվիրանների ցանկեր, խմբավորելով դրանք և վիճաբանելով դրանց շուրջ:

Մի օր հոգևոր առաջնորդների մի խումբ փորձեցին ներքաշել Փրկիչին տարաձայնությունների մեջ: Նրանք առաջադրեցին մի հարց, որի շուրջ մի քանիսը համախոհներ էին:

«Վարդապետ,- հարցրեցին նրանք,- ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքումը»:

Բոլորս էլ գիտենք, թե ինչպես պատասխանեց Հիսուսը. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը:

Սա առաջին և ամենամեծ պատվիրանն է:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս:

Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէքը»:[1]

Խնդրում եմ ուշադրություն դարձնել վերջին նախադասությանը. «Այս երկու պատուիրանքից կախուած են *բոլոր*օրէնքը եւ մարգարէքը»:

Փրկիչը ոչ միայն մեզ ցույց տվեց թիրախը, այլ Նա նաև նշեց նպատակակետը:

Հարվածել նպատակակետին

Որպես Եկեղեցու անդամներ մենք ուխտում ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը: Այդ ուխտի պարտադիր պայման է հանդիսանում այն, որ մենք ձգտենք ճանաչել Աստծուն, սիրել Նրան, մեծացնել Նրա հանդեպ մեր ունեցած հավատը, պատվել Նրան, քայլել Նրա ճանապարհով և ամուր կանգնել որպես Նրա վկաներ:

Որքան շատ ենք մենք ճանաչում Աստծուն և զգում մեր հանդեպ ունեցած Նրա սերը, այնքան շատ ենք հասկանում, որ Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը աստվածային պարգև է: Եվ Աստծո սերը ոգեշնչում է մեզ բռնել ճշմարիտ ապաշխարության ուղին, որի արդյունքում ականատես կլինենք ներման հրաշքին: Այս գործընթացը մեզ թույլ է տալիս ունենալ ավելի մեծ սեր ու գթություն մեզ շրջապատող մարդկանց հանդեպ: Մենք կսովորենք տեսնել ավելին: Մենք կդիմադրենք գայթակղությանը՝ քննադատելու կամ դատապարտելու ուրիշներին իրենց մեղքերի, թերությունների, սխալների, քաղաքական դիրքորոշումների, կրոնական համոզմունքների, ազգության կամ մաշկի գույնի համար:

Յուրաքանչյուրի մեջ մենք կտեսնեք Երկնային Հոր զավակի՝ մեր եղբորը կամ մեր քրոջը:

Մենք օգնության կհասնենք ուրիշներին՝ փորձելով հասկանալ ու սիրել, նույնիսկ նրանց, ում այդքան էլ հեշտ չէ սիրելը: Մենք կսգանք նրանց հետ, ովքեր սգում են և կսփոփենք նրանց, ովքեր սփոփանքի կարիք ունեն:[2]

Եվ մենք կգիտակցենք, որ ավետարանի ճիշտ նպատակակետը տանջալից դարձնելու կարիք չկա:

Երկու մեծ պատվիրանները հենց թիրախն են: Այս երկու պատվիրանների վրա են հիմնվում բոլոր օրենքներն ու մարգարեները:[3] Եթե մենք ընդունենք սա, մնացած բոլոր բարի բաներն իրենց տեղը կընկնեն:

Եթե մեր հիմնական ուշադրությունը, մտքերը և ջանքերը կենտրոնացած են Ամենակարող Աստծո հանդեպ ունեցած սերը մեծացնելու և ուրիշների հանդեպ ավելի մեծահոգի լինելու վրա, ապա կարող ենք իմանալ, որ մենք գտել ենք ճիշտ թիրախը և նպատակակետը՝ դառնալով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 22.36-40
2. Տես Մոսիա 18.9:
3. Տես Մատթեոս 22.40:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախքան այս ուղերձով կիսվելը դուք կարող եք երգել «Մեր Փրկչի սերը» օրհներգը (*Hymns,* no. 113): Ապա խրախուսեք նրանց, ում այցելում եք, խորհել իրենց սեփական կյանքի «թիրախների» շուրջ: Դուք կարող եք քննարկել ուղիներ, համոզվելու համար, որ երկու մեծ պատվիրանները՝ «սիրիր քո Տէր Աստուծուն» և «սիրիր քո ընկերին քո անձի պէս» (տես Մատթեոս 22.37, 39), մշտապես առաջնորդում են նրանց արարքները: Կարող եք նաև կիսվել յուրահատուկ ուղիներով, որոնց օգնությամբ դուք կենտրոնացրել եք ձեր իսկ կյանքը Քրիստոսի վրա, և կիսվեք վկայությամբ, թե ինչպես է դա օրհնել ձեզ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

ժպիտը կարող է շատ բան փոխել

Նախագահ Ուխդորֆը շեշտում է երկու նպատակներ, որոնք մենք պետք է ունենանք մեր արարքներում. սիրենք Աստծուն և սիրենք մեր մերձավորներին: Սակայն երբեմն այդքան էլ հեշտ չէ սիրել ուրիշներին: Ձեր կյանքի ընթացքում կլինեն պահեր, երբ կդժվարանաք շփվել ուրիշների հետ. գուցե մեկը նեղացնի ձեզ կամ դժվար լինի շփվելը կամ մեկի հետ լեզու գտնելը: Այդ պահերին փորձեք հիշել սերը, որ զգացել եք ձեր ընկերների, ընտանիքի, Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի կողմից: Հիշեք ուրախությունը, որ զգացել եք այդ պահերին, և փորձեք պատկերացնել, թե ինչ տեղի կունենար, եթե բոլորը հնարավորություն ունենային զգալու նման սեր: Հիշեք, որ յուրաքանչյուրը Աստծո դուստրը կամ որդին են և արժանի են թե Նրա *և* թե ձեր սիրուն:

Մտածեք որևէ անձնավորության մասին, ում հետ դժվար է ընկերանալը: Ներառեք նրան ձեր

աղոթքներում և խնդրեք Երկնային Հորը բացել ձեր սիրտը նրա համար: Դուք շուտով կսկսեք տեսնել նրան այնպես, ինչպես Նա է տեսնում. որպես Նրա զավակներից մեկը, ով արժանի է սիրո:

Աղոթելուց հետո մի լավ բան արեք նրա համար: Գուցե հրավիրեք նրան միասին ինչ-որ բան անել կամ ընկերներով գնաք զբոսնելու: Առաջարկեք ձեր օգնությունը՝ տնային առաջադրանքները կատարելիս: Նույնիսկ կարող եք պարզապես ժպտալ և ասել «բարև»: Փոքր բաները կարող են շատ բան փոխել . . . ձեր երկուսի կյանքում:

ԵՐԵԽԱՆԵՐ

Նպատակակետ

Նախագահ Ուխդորֆն ասում է, որ ավետարանը նման է նշանակետին կրակելուն: Մենք պետք է կենտրոնանանք կարևորագույն բաների վրա: Երկու մեծագույն պատվիրաններն են՝ սիրել Աստծուն և սիրել մեր մերձավորին: Եթե մենք կենտրոնանանք այս երկու բաների վրա, մենք կարող ենք ամեն անգամ հարվածել նպատակակետին:

Թերթիկի վրա նկարեք մի մեծ թիրախ: Թող ծնողները ձեզ համար կարդան հետևյալ ցանկը: Եթե ցանկում նշվածը օգնում է մեզ սեր ցուցաբերել Աստծո և ուրիշների հանդեպ, ապա գրեք կամ նկարեք այն թիրախի կենտրոնում:

Կիսվել ձեր խաղալիքներով
Կոնֆետ գողանալ
Գնալ եկեղեցի
Վիրավորել որևէ մեկին
Աղոթել
Գրկել մեկին
Կռվել ձեր քույրերի ու եղբայրների հետ

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, January 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97921 201

Սփոփող Միության նպատակը

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սփոփող Միության նպատակն է «նախապատրաստել կանանց հավերժական կյանքի համար»,- ասել է Սփոփող Միության գերագույն նախագահ Լինդա Ք. Բըրթընը:[1] Հավատի, ընտանիքի և սփոփանքի միջոցով է, որ մենք նվիրվում ենք մեր «աշխատանքի կենսական մասին»:[2]

Սփոփող Միությունը «ֆիզիկական և հոգևոր աշխատանք է», - ասել է Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական Քերոլ Մ. Սթեֆենսը: «Դա այն է, ինչը քույրերն արել են Փրկիչի օրերում, և դա այն է, ինչը մենք շարունակում ենք անել»:[3]

Երբ մենք նայում ենք աղբյուրի մոտ եկած սամարացի կնոջը, ով թողեց իր կուժը և վազեց ուրիշների մոտ ու հայտարարեց, որ Հիսուսը մարգարե է (տես Հովհաննես 4.6–42), կամ Փիբեին, ով իր ողջ կյանքում ուրախ սրտով ծառայում էր ուրիշներին (տես Հռովմայեցիս 16.1–2), մենք տեսնում ենք կանանց օրինակներ Փրկիչի օրերում, ովքեր ակտիվորեն եկել են դեպի Քրիստոս: Այդ Նա է, որ բացում է դեպի հավերժական կյանք տանող մեր ուղին (տես Հովհաննես 3.16):

Երբ նայում ենք Նավուի (Իլինոյս) մեր ռահվիրա քույրերին, ովքեր 1842 թվականին հավաքվեցին Սարա Քիմբալի տանը, հիմնելու իրենց կազմակերպությունը, մենք տեսնում ենք Աստծո ծրագիրը՝ կապված Սփոփող Միության կազմավորման և քահանայության հետ զուգահեռ քայլելու հետ: Երբ Էլիզա Ռ. Սնոուն գրեց սահմանադրությունը, Մարգարե Ջոզեֆ Սմիթը վերանայեց այն: Նա հասկացավ, որ Եկեղեցու կազմավորումն ավարտված չէր, մինչև որ կազմավորվեցին քույրերը: Նա ասաց, որ Տերն ընդունել էր նրանց առաջարկությունը, սակայն ավելին էր պատրաստել նրանց համար: «Ես կկազմավորեմ կանանց քահանայության ներքո՝ քահանայության օրինակով»,- ասաց նա:[4]

«Սփոփող Միությունը պարզապես կանանց մեկ այլ խումբ չէր, ովքեր փորձում էին բարիք գործել աշխարհում: Այն առանձնահատուկ էր: Այն «ավելին էր», քանի որ կազմավորվել էր քահանայության իշխանության ներքո: Դրա կազմավորումը անհրաժեշտ քայլ էր՝ Աստծո գործը երկրի վրա ծավալելու համար»:[5]

Լրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություններ

Վարդապետություն և Ուխտեր 25.2–3, 10, 88.73, *reliefsociety.lds.org*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Linda K. Burton, in Sarah Jane Weaver, “Relief Society Celebrates Birthday and More March 17,” *Church News,* Mar. 13, 2015, news.lds.org.
2. Linda K. Burton, in Weaver, “Relief Society Celebrates Birthday.”
3. Carole M. Stephens, in Weaver, “Relief Society Celebrates Birthday.”
4. Joseph Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 11–12.
5. *Daughters in My Kingdom,* 16.

Խորհեք այս մասին

Սփոփող Միությունն ինչպե՞ս է օգնում կանանց իրականացնել Երկնային Հոր կողմից իրենց համար նախատեսված աստվածային դերը և առաջնորդել նրանց դեպի հավերժական կյանք:

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, January 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97921 201